

բուեստագիտին գործատունը աշքէ անցնելու, Մէնիէ փառաւոր հացկերոյթ մը տուաւ՝ ուր հրավիրեալ էր նա ինքն Բադրուպանեան։ Կերակուրի ժամանակ ոտք ելաւ յանկարծ գաղղիացի բազմականներէն մէկը ըսելով. «Ինչ որ Պուտարէշդի նուիրակը ասկէ երեք օր առաջ Բարիզ քաղաքին մաղթեց՝ որուն արձագանքը և ի Noisiel կը հնչէ, նոյնը կը մաղթեմ և ես Պուտարէշդի համար, կեցչ արևմտեանն Բարիզ՝ Պուտարէշդ» .—

Այս միջոցին պարծանքն հայոց Բադրուպանեան՝ ընտրուեցաւ ընդհանուր բժշկական ընկերութեան և առողջաբանութեան արուեստական անդամ, իսկ Պելճիոյ արքունական ընդհանուր բժշկական ընկերութեան՝ արտաքին թղթակից անդամ։ — Սակայն չի մոռնանք, անցաւոր է ամենայն ինչ յաշխարհի. Յն տարի փայլեցաւ յարևմուտս հունդարահայոց մարգարիտը Բադրուպանեան, որոյ այսօրուան օրս անջնջելի յիշատակը միայն կայ. անմահ հոգին յերկինս է, մահկանացուն կերակուր որդանց ի սիրտ երկրի, վասն զի անցեալ տարի յունիսի Յնին գերեզման իջաւ, իմաստութեամբը, քրտնաջան աշխատութեամբը բարձրացուց իւր անձը, բարձրացուց մէկ ազդ մը, որուն հետ ապրեցաւ և որով փառաւորուեցաւ։ Եղիսաբեթուպօլիս որ կեանք տուաւ իրեն, և ծիծաղերես կը նայէր վրան, հիմայ կ'ողբայ զինքը՝ զիւր հարազատ որդին։

## ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԻՃԵՒԱՆՈՒ

### ՄԱՍՆ ԶՈՐՌՈՐԴ

(Տևս յէջ 278)

— 205 —

Ա.ԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ Ա.ԶԳԱՀԱՄԱՐ

**Ա.ԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ**. — Այս վիճակաց բուն տեղացի բնակին կրկին է՝ Հայ և Թաթար։ Հայերը զիրենք կը համարին տեղեացս նախկին բնակիչք, և իրենց ծագումը կը հանեն մինչեւ ի Հայկ՝ թոռն Նոյի, յորմէ և զիրենք Հայ կ'անուանեն։ Առանց Հայոց պատմութեան մէջ միսելու՝ հարկ կը համարիմ հոս հարեւանցի ակնարկել՝ որ նոցա տիրապետութիւնը 4000

տարի տեւած է, որոյ բովանդակ ընթացքին մէջ անդադար պայքարեր են դրացի՝ ու նաև հեռաւոր կողմերէն եկած ասպատակաց հետ։ Գանուելով ընդ մէջ Ասիոյ և Եւրոպայ ճանապարհին վրայ՝ պէտք էին պաշտպանել զիրենք հաւասարապէս թէ եւրոպացւոց և թէ ասիացւոց գէմ։ Հայք՝ իրենց զինուց ուժով և գիմացկուն բնութեամբ՝ երկար ժամանակ իրենց հայրենի լեռները ձեռքբռնէն չըհանեցին. բայց տակաւ Յոյնք և Հոռոմք սկսան ճնշել զանոնք և նուածել իրենց իշխանութեան ներքյ. ապա վրայ եկան արեւելեան յարձակմու՞ք՝ Պարսիկ և այլ բազում՝ Մ'իջին Ասիոյ ժողովրդոց, որ այնպէս վայրենաբար յորդեցին յեւրոպէ ի միջին դարս։ Նախիջեւանու աւանին մէջ ցարդ իսկ կը յիշեն լանկ-թիմուրի անունը, որ Երընջակ գեաց (Ալինձա-չայի) անմատոց բերդին մէջ ամբացած՝ բնակիչքը անօթութեամբ մեռուց, և գրեթէ մի առ մի Ծնջեց։ — Կազ Լանկ-թիմուրի անուան կը հանդիպիմք. նաեւ դամբանական վերտառութեանց մէջ. ինչպէս Դարալաղըզի վիճակին՝ կուշի գիւղին հին գերեզմաննոցի մէջ՝ դամբանաբարի մի վերայ ընթերցայ հետևեալ տողերը. — (Կէտերը յնջուած բառից տեղ դրուած են).

**Դարատաշկեցի և Պետրոս Երեց կիրեցի<sup>\*</sup> . . . ի բորսականին ՌՃԵ, որ տարին... Շահ բամուր, որ Գիլանայ փատշահն (Էր), տռաշ.... զոռով.... խարձ ելաւ:**

Շարունակեալ անվերջ պատերազմը՝ յետ Հայոց թագսւորութիւնը ձեւանալու, տրոհեց զայն փոքր փոքր իշխանութեանց, և կամաց կամաց տարաւ հասուց իր կատարեալ անկմանն. Սակայն և այնու հանգերձ բուռն մի արարատեան Հայք դեռ եւս շարունակեցին պատերազմի՝ ոչ ևս քաղաքական ազատութեան համար, այլ իրենց եկեղեցւոյն վրոյ նահատակելով։ Արարատեան Հայաստանի հարկատու հանդամանաց մէջ գտնուելուն վերջին դարուց պատմութիւնը՝ կը ցուցանէ թէ որչափ այդ Հայերը հաւատարիմ էին իրենց կրօնին։ Ասոնք աներկիւզ՝ նախարարի մի առաջնորդութեամբ՝ կը խիզախէին Պարսից բանակին ահաւոր զօրութեան գէմ, որպէս զի կարենան անխախտ

\* Հեղինակը գրեցի կը թարգմոնէ։

պահել հայրենի կրօնքն և եկեղեցին . բայց վերջապէս չկրցան խսպառ տեւել և յաջողիլ ուզածնուն մէջ՝ Պարսիկ և Տաճիկ աշխարհակալութեանց ուժգին ճնշմամբ՝ Հայոց մասն մի խոնարհցաւ անոնց գաւազանին տակ , մաս մ'այլ սփռեցաւ ցիրուցան ընդ ամենայն աշխարհ ի գիւտ ոգեպահիկ հացի՝ ի պահեատ կենաց : Օտար ժողովրդոց միջի կեանքը՝ գրեթէ հայ բնութեան վիճակուած ամէն յատկութիւնքն այլափոխեց , սկարացուց անոնց պատերազմական ոգին , զօրացուց անոնց մէջ ծածկամտութիւն , խորագիտութիւն , որը գարձան միակ միջոց անկասկած ապրուստի . Բաց աստի քանի մի Հայ գաղթականութիւններ մոռցան նաեւ իրենց լեզուն և սովորոյթքը , թէպէտ և անխախտ պահելով իրենց կրօնքը : Հայու բնութեան վերագրուած բոլոր պարսաւելի յատկութիւնքը՝ անոր քաղաքական կենաց արդիւնք լինելով , հետեւաբար՝ անոնց ժողովրդական բնութեան նկատմամբ՝ օտար տարր մի կը կազմեն : Ով որ ծանօթ է Հայատանի սիրտը բնակող Հայ գիւղական ընկերութեան , նա իսկոյն կը համենցի՝ որ Հայն ամենեւին այն շատ մի տեղագրաց ներկայացուցածին համաձայն չէ , որոց հետազոտութեանց առարկայն գլխաւորապէս Հայու վաճառական գան եղած է , որ ոչ միայն ի Հայս՝ այլ և ամէն ազգաց մէջ կ'որոշի իւր քանի մի ոչ գովելի յատկութեամբք : Ուստի ես այլ , Հայոց վրայ խօսելով , առանձին կերպով մի գիւղաբնակ ընկերութիւնը կը նկատեմ , որ ըստ իս , պէտք է իբրև ազգին տիպար ծառայէ :

Այս վիճակաց մէջ բնակող Հայերը՝ մեծաւ մասամբ միջահասակ են , թխագոյն գիմզք և սեաւ վառվըռուն աշքերով , նոյնպէս և սեաւ գանդուր մազերով : Աշխատասիրութեան , խոհականութեան և կենաց ժուժկալութեան մէջ՝ հաւասարող նախանձորդ մի չունին : Հայն զարնան սկիզբէն ձեռք կը գարնէ իր անդուկ աշխատութեանը արտի և պարտիզին մէջ , պատրաստելով այնու իր մնընդեան տարեկան պաշարը : Դաշտի աշխատութիւնքն այլ կ'աւարտին՝ բայց նա անգործ չի մնար . կը քաշէ իր առջեւ՝ պահած նախաջրհեղեղեան կազմածը , և կնոջը պատրաստած բամբակաթղթոյ թելով կը սկսի ծաղկալաթ հիւսել , և կամ ձեռքի ջահրակաւ բամբակը սերմերէն կը մաքրէ : Ջըմերուան երկար գիշերներ և տօնի օրեր՝ Հայերը ախոռներու մէջ առանձին պատրաստուած տեղ մի կը ժողվուին , Միհանաս կոչուած , ուր բամբակը կոկոններէն դուրս հանելով կը զբաղին . Մեր այս գործողութիւնն տանց մէջ քուրսիի վրայ կը կատարեն , ոսքերնին ի ցրտոյ անոր տակէն անցած թոննրի ջերմ պարունակին մէջ պատսպարելով : Հայ կինը դաշտի աշխատու-

թեան սակաւ կը մասնակցի, ի բաց առեալ լեռնարնակ գիւղերը՝ ուր գրեթէ արանց հաւասար կ'աշխատին։ Հովտային մասնց մէջ նա կ'ոռոգէ պահեղը և բամբակաթուղթը, և ի պարափին կ'օգնէ առն մի քանի թեթեւ գործերու մէջ։ Տան մէջ բովանդակ հոգն ու տանտիկնութիւնը կնոջ վրայ է, ինչպէս կաթի և կաթնեղինաց տնտեսութիւնը, կարը, խոհակերութիւնն և այլն։ Նա ըստ սովորութեան պէտք է առաւօտ արշալուսին ենէ, և այն ատեն կ'աւելէ տունը, կը կրէ ամբողջ օրուան գործածութեան համար բաւական ջուր, և սպա կը սկսի խոհակերել։ իսկ երբ կերակրոյ պատրաստութիւնը կ'աւարտէ՝ կարելու ձեռք կը զարնէ։ Մնացած ժամանակը՝ եթէ ամեննեին գործչկայ՝ դատարկ կ'անցընեն, կամ ձմեռները քուրսիի տակ նըստած։ կը զբունուն։

## ՑԱՆԿ

Պաւղիկեան աղանդն . . . . . . . . . .	365
Ափրիկէ . . . . . . . . . .	381
Մեծ և փաքի մարդիկ . . . . . . . . . .	386
Բարիզու գրասունը . . . . . . . . . .	387
Ուսումն Հայ լեզուի . . . . . . . . . .	390
Շիգակ . . . . . . . . . .	394
Զրոյ գոյները . . . . . . . . . .	397
Գր. Բագրուպանեան . . . . . . . . . .	405
Ոտոր. Նախիջևանու . . . . . . . . . .	409

